Արահետ

ISSN 2579-2571

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

3/2021

ԱՊԱԿԵ ԱՉՔԵՐԸ
էջ 18

ԱՆՏԱՌԻ ՀՍԿԱՆ
էջ 26



Աճ

Կռահի՛ր ռեբուսը և իմացի՛ր, թե ինչ աճի մասին է խոսում Աննան և ինչի մասին է խոսք գնալու ամսագրի այս համարում:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Գոռը հագավ և կոճկեց : Տեղում ցատկելով՝ շարժում արեց ,

ասես հարվածում էր : – Եվ այսպես, , – ասաց մարզիչը, – հաջորդ շաբաթ մենք մրցումների ենք մյուս

դպրոցների թիմերի հետ: Մինչ կսկսենք խաղալ , պետք է նախավարժանք անենք:

«Ախ, այդ վարժությունները, – մտածեց , – ինչի՞ համար են դրանք պետք»:

դուրս եկան և իրար հետևից սկսեցին վազել: հրահանգ տվեց, և սկսեցին ցատկել մեկ

: կրկին հրահանգեց, և ցատկոտեցին մյուս վրա, հետո համար

հաջորդեցին , և նույնիսկ գլխի համար:

Նախավարժանքից հետո շնչակտուր մոտեցավ :

– Դե իսկ հիմա մենք ենք խաղալու՞, – հարցրեց և եկավ:

– Ոչ, դուք դեռ պատրաստ չեք: Մաքսի՛մ, կանգնի՛ր մոտ: Իսկ մնացած հերթով

հարվածե՛ք ամեն մեկդ տաս անգամ:

սկսեցին հառաչել. նորից այդ : Ե՞րբ է սկսվելու իսկական :

Բայց դրանից հետո էլ չվերջացան: Հիմա էլ պետք է օձաձև վարեին :

Հետո նրանց վերջապես թույլ տվեցին գրավել իրենց դիրքերը: գոհ էին:

Մեկ շաբաթից կայացան այլ դպրոցների թիմերի հետ մրցումները: թիմը հաղթեց և գրավեց տեղը:

Հաղթողի ստանալուց հետո իր շուրջը հավաքեց և ասաց.

– Հիմա տեսնո՞ւմ եք, թե որքան կարևոր է նախավարժանք կատարելն ու մարզվելը ամեն անգամ

խաղալուց առաջ: Հենց դրա համար դուք այսօր գրավեցիք տեղը:

Երջանիկ հիանում էր : Այո՛, լավագույնը դառնալու համար պետք է մարզվել:

Նկ.Տատյանա Կոստերցկայա

ՄՈՎՍԵՍԻ ՕԳՆԱԿԱՆԸ

Վալդեմար Յորն

Մովսեսը, որի հետ Աստված խոսում էր այնպես, ինչպես մարդիկ խոսում են իրար հետ, հենց նա, ով Իսրայելի ժողովրդին հանել էր եգիպտական գերությունից, մահացավ: Եկել էր նրա ժամանակը:

Սակայն նա ուներ օգնական, որի անունը Հեսու էր: Նա Նավեի որդին էր: Տարիներ շարունակ նա ծառայել էր Աստծո ժողովրդի առաջնորդին: Նա տեսել էր Մովսեսի միջոցով Տիրոջ գործած բոլոր հրաշքները: Իսկ երբ Մովսեսը մտնում էր իր վրանը, որպեսզի խոսեր Աստծո հետ և լսեր, թե Նա ինչ էր ասելու իրեն, Հեսուն պահպանում էր վրանը:

Եվ հիմա, երբ Մովսեսն այլևս չկար, Աստված դիմեց Հեսուին՝ Մովսեսի օգնականին, և ասաց. «Իմ ծառան՝ Մովսեսը վախճանվեց, այժմ դու ելի՛ր և անցի՛ր Հորդանանը, դու և այս ամբողջ ժողովուրդը, դեպի այն երկիրը, որ Ես Իսրայելի որդիներին եմ տվել: Ամեն մի տեղ, որտեղ ձեր ոտքերի ներ-



Ի՞նչ ես կարծում.

1. Ումի՞ց էր Հեսուն սովորել կառավարել ողջ ժողովրդին:
2. Ի՞նչ պետք է աներ Հեսուն ամեն օր, որպեսզի իր բոլոր գործերում հաջողություն ունենար:
3. Ի՞նչ բնավորության գծեր պիտի ունենար առաջնորդը:

բանները դնեք, դա՛ Ես ձեզ եմ տվել, ինչպես ասացի Մովսեսին: Անապատից և այս Լիբանանից մինչև մեծ գետը, այսինքն՝ Եփրատ գետը, քետացիների ամբողջ երկիրը մինչև մեծ ծովը՝ արևմտյան կողմը, ձեր սահմանն է լինելու: Քո կյանքի բոլոր օրերում որևէ մեկը չի կարողանալու քեզ դեմ կանգնել: Ինչպես Մովսեսի հետ էի, քեզ հետ էլ նույնպես պիտի լինեմ: Ես քեզ չեմ թողնի, ոչ էլ կլքեմ...

Օրենքի այս գիրքը թող քո բերանից չհեռանա՛, գիշեր ու ցերեկ մտածի՛ր դրա մասին, որպեսզի նրա մեջ ամբողջ գրվածը պահես ու կատարես. քանի որ միայն այդ դեպքում գործերդ կբարգավաճեն, և հաջողություն կգտնես:

Մի՞թե չեմ հրամայել քեզ՝ զորացի՛ր, քաջասի՛րտ եղիր, մի՛ վախենա և մի՛ զարհուրիր, քանի որ քո Տեր Աստվածը քեզ հետ է, ուր էլ որ գնաս»:

Նավեի որդի Հեսուն հնազանդվեց Տիրոջը և դարձավ Իսրայելի ժողովրդի առաջնորդը՝ Մովսեսի փոխարեն: Ժողովուրդն ասաց.

«Մենք կկատարենք քո բոլոր հրամանները և կգնանք այնտեղ, որտեղ դու մեզ ուղարկում ես: Ինչպես ամեն ինչում լսում էինք Մովսեսին, այնպես էլ քեզ կլսենք, միայն թե քո Տեր Աստվածը քեզ հետ լինի, ինչպես որ Մովսեսի հետ էր»:

Նավեի որդի Հեսուն Մովսեսի օրինակով ամեն բան անում էր այնպես, ինչպես Աստված ասում էր իրեն: Նա ժողովրդին անցկացրեց Հորդանանը, գրավեց այն երկիրը, որն Աստված խոստացել էր Իր ժողովրդին, և այն բաժանեց Իսրայելի բոլոր ցեղերի միջև:

Նավեյան Հեսուի մասին Աստվածաշնչում շատ է գրված: Այն մասին, թե Աստված ինչպես է նրան կանչել՝ դառնալու Իսրայելի ժողովրդի առաջնորդը, դու կարող ես կարդալ հենց Հեսուի գրած գրքի առաջին գլխում: Այն հենց իր անունով էլ կոչվում է:

ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հեսուին ժողովրդի առաջնորդ դարձնելուց առաջ Աստված նրան պատվիրեց կատարել մի կարևոր պայման: Այդ պայմանը նրան օգնելու էր հաջողակ, զորեղ և քաջ լինել: Կարդա՛ համարը և իմացի՛ր Հեսու Նավեի զորության գաղտնիքը:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	ՈՒ	Փ	Ք	և	Օ	Ֆ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20																			

_ _ _ _

ԲԺԻՇԿ ԿԱՊԻԿԸ

Պաուլ Ուայթ



– Ի՞նչ եք կարծում, քաղցածի համար նոր վերնաշապիկը ամենահամապատասխան նվե՞րն է, – հարցրեց Հովհաննեսը երեխաներին:

– Կամ, ասենք, մի զույգ նոր կոշիկները, – շարունակեց Դաուդին:

– Այդ ինչի՞ մասին եք խոսում, – զարմացավ Մգոգոն:

Դաուդին նայեց շնիկին, որի առջևի թաթը վիրակապված էր, և սկսեց իր պատմությունը:

Գրոգին հիվանդ էր: Նա չէր ցանկանում վիտամիններ խմել, դրա համար էլ նրա թաթիկները թույլ էին: Մի անգամ նա լսեց Նիանիի պատմությունը՝ Պիլի կապիկի մասին:

Ծննդյան օրը Պիլին նվեր էր ստացել «Դեղեր և բժշկական օգնություն» գիրքը: Նիանին պատմեց, թե նա ինչ հիվանդություններ էր կարողացել բուժել:

Գրոգիի ականջները ծուլորեն կախվում էին, աչքերն՝ ակամա փակվում: Կոպերը բացելով՝ Գրոգին ինչ-որ անծանոթի տեսավ, որը լրջորեն զննում էր իր ոտքերը:

Նրա ձեռքին գիրք կար և նա փորձում էր հասկանալ, թե Գրոգին ինչ հիվանդ էր: «Հենց սա է Պիլին», – մտածեց Գրոգին: Բժիշկը բացեց. «Բորբոքումներ և վերքեր» գլուխը:

Թեթևակի կարդալով այդ գլուխը՝ նա վերցրեց վիրակապն ու, չնայած հիվանդի բողոքներին, վիրակապեց նրա ոտքերը: Դա հեշտ չէր, քանի որ Գրոգին անդադար հազում էր:

Տվիգա ընձուղտը հարցրեց. «Արդյո՞ք հնարավոր չէ հազն ինչ-որ կերպ անցկացնել»: «Մի՞թե հնարավոր է հազը գիպս դնել կամ վիրակապել», – զարմացած հարցրեց Պիլին:

Փակելով դեղատուփը՝ նա գնաց Նեմբո փղի մոտ: Փիղը լավ տրամադրություն ուներ: Նեմբոն լսեց Պիլիին և համաձայնեց փորձարկմանը՝ հանուն գիտության:

Ընձուղտ Տվիգան, քամելեոն Լվիվին և արջնագռավ Միցին հետևում էին տեղի ունեցողին: Պիլին հմտորեն վիրակապեց Նեմբոյի պոչը: Հետո կապկպեց նաև փղի կնճիթը:

«Այո, նա վարպետ է» – բացականչեց Միցին: «Լիը՞ն, – համաձայնեց Տվիգան, – բայց ամեն հիվանդություն չէ, որ վիրակապով է բուժվում»: Առավոտյան Պիլին կրկին վիրակապեց Գրոգիի ոտքերը: Տվիգան հարցրեց.

«Չես կարծո՞ւմ, որ հիվանդին հազի դեղ է պետք»: Պիլին դժգոհ դեմքով նայեց ընձուղտին. «Թույլ տուր, շարունակել աշխատանքս»:

Այդ գիշեր ջունգլիների բնակիչների քունը խանգարեց գետաձիու ողբը: Պիլին ևս լսեց այն: Նա որոշեց գրքում կարդալ, թե ինչ է գրված նշագեղձերի մասին:

Պիլին հենց նոր էր հասցրել կարդալ այդ գլուխը, երբ նրան մոտեցավ գետաձի Բուխուն: Նրա ձայնը խռպոտ էր, իսկ վզի շուրջը ջրաշուշանի արմատներից կոմպրես էր:

«Լայն բացի՛ր բերանդ և ասա՛. ա՜, – կարգադրեց Պիլին: Գետաձիու երախն ավելի խորը զննելու համար բժիշկը ստիպված էր բռնվել Բուխուի ատամից:

Պիլին գլխով արեց, հանեց ջրաշուշանները և թաշկինակով վիրակապեց գետաձիու հսկայական վիզը: Վիրակապն արագ կեղտոտվեց ճահճում, իսկ Բուխուի կոկորդը շարունակում էր ցավել:

Հաջորդ օրը Պիլին մոտեցավ Գրոգիին, որպեսզի կրկին վիրակապեր նրա ոտքերը: Ռուկու թութակը, որ խիստ անհանգստացած էր հիվանդի խզխզոցից, հարցրեց.

«Պիլի՛, մի՞թե ավելի կարևոր չէ հազը բուժելը»: Պիլին լռեց, բայց նրա պոչի շարժումն ու ժպիտը պարզ ասում էին, թե նա ինչ է մտածում թութակների ինտելեկտի մասին:

Օրերը թռչում էին, իսկ հիվանդի հազը չէր նվազում: Գրոգին օրեցօր ավելի էր նիհարում: «Ավելի կարևոր է նրա կյանքը, քան ոտքերը» – ասում էր Տվիգան բժշկին:

Պիլին ոչ ոքի չէր ուզում լսել: Նա ծամածռում էր քիթն ու բոլորին պատասխանում. «Ես տանել չեմ կարողանում ուրիշների միջամտությունը, երբ աշխատում եմ»:

Երեք օր անց Պիլին եկավ հիվանդի մոտ: Ծառի մոտ նրան դիմավորեց տխուր կապիկների խումբը: «Գրոգին մահացավ» – տեղեկացրեցին բժշկին: Պիլիի քիթը սկսեց դողալ:

«Չի՞ կարող պատահել, – բացականչեց նա, – ախր ես ամեն օր խնամքով վիրակապում էի նրա ոտքերը...» Դա լսելով՝ Տվիգան ասաց.

«Չեք կարծու՞մ, որ ոտքերը վիրակապելը թոքաբորբի լավագույն բուժումը չէ: Այդ դեպքում նույնիսկ ամենամաքուր վիրակապը չի օգնի»:

Ունկնդիրները համաձայնությամբ գլխով արեցին: Դաուդին վեր կացավ.

– Շատ կարևոր է ձեռքերը լվանալ, բայց մի՛ մոռացեք նաև ձեր սրտի մաքրության մասին: Մարմնի առողջությունն այնքան կարևոր չէ, որքան հոգունը: Հիշե՛ք, որ մեր երկրային տունը ոչինչ է՝ համեմատած նրա հետ, որ մեզ համար պատրաստել է Հիսուսը երկնքում: Միշտ մտածե՛ք այն մասին, ինչն իրոք կարևոր է: Հիսուսն ասել է. «Բայց նախ փնտրե՛ք Աստծո արքայությունը...»

– «...Եվ այդ ամենը կտրվի ձեզ», – շարունակեց ավագ տղաներից մեկը:

Մգոգոն ժպիտով նայեց Դաուդիին.

– Առաջ ես չէի հասկանում, թե դու ինչու ես ինձ շնիկ նվիրել: Նրա աչքերը հազիվ էին բացվել, և շատ անվստահ էր կանգնում ոտքերի վրա: Բայց հիմա ես ամեն բան հասկացա:

Դաուդին ոչինչ չպատասխանեց, միայն ժպտաց: Մգոգոն շարունակեց.

– Ինձ համար մեծ դժվարություն էր նրան կերակրելը, լողացնելը և դաստիարակելը:

– Իսկ երբ նա հիվանդացել էր, դու ի՞նչ էիր անում:

– Այդ ժամանակ ես քեզանից խնդրեցի անհրաժեշտ դեղը, որն էլ օգնեց նրան:

Տղան փակեց աչքերը՝ հիշելով, թե շնիկն ինչ տհաճությամբ էր ընդունում դեղը:

Դաուդին հստակեցրեց.

– Դու ասում ես, որ հիմա ամեն ինչ հասկացե՞լ ես:

Մգոգոն գլխով արեց.

– Երբ շնիկը դեռ նոր էր ծնվել, նա շատ թույլ էր: Նա չէր կարող ոսկոր կրծել, դրա համար ես նրան կաթ էի տալիս: Այդ ժամանակ նույնիսկ Պանյա առնետը կարող էր սպանել նրան, բայց շուտով շնիկը մեծացավ: Բայց նույնիսկ այդ ժամանակ նա բորենուն չէր կարողանա դիմակայել, եթե ապրեր մենակ՝ առանց տիրոջ: Շնիկին իրական վտանգ էր սպառնում վայրի գազաններից: Եվ եթե ես չպաշտպանեի նրան, ամեն բան կարող էր շատ ցավալի ավարտ ունենալ: Երբեմն նա այնքա՜ն անհնազանդ էր: Բավական է՝ ինձ նայի անմեղ հայացքով, ես անմիջապես հասկանում եմ. դարձյալ մի անկարգություն է արել: Մե՛կ իմ կոշիկներն են կորում, մե՛կ նա թաթը չի կարողանում հանել աղբամանից: Ես տեսել եմ նրա լավ ու վատ արարքները, հնազանդությունն ու անհնազանդությունը:

Ոտքով ավազին նախշեր նկարելով՝ Մգոգոն շարունակեց.

– Ես շատ էի ուրախանում, որ նա ինձ հետզհետե ավելի ու ավելի շատ էր սիրում: Ես զգում էի դա. չէ՞ որ նա ավելի շատ ժամանակ էր անցկացնում ինձ հետ և անում էր այն, ինչ ես ասում էի իրեն:

Այդ ժամանակ Մգոգոն բարձրացրեց գլուխը՝ ուրախությունից փայլելով.

– Գիտե՞ս, Դաուդի՛, այն, ինչ ես նկատում էի շնիկիս մոտ, հիմա տեղի է ունենում ինձ հետ՝ իմ ապաշխարությունից հետո:

Փոքր-ինչ լռելուց հետո տղան ավելացրեց.

– Քո և Հովհաննեսի խոսքերը բացեցին իմ աչքերը շատ բաների հանդեպ, դրանք հիմա ինձ դրդում են գործողությունների: Ես մտածում եմ, որ Աստված ինձ հետ ունի նույն խնդիրները, ինչ ես իմ շնիկի հետ:



Նկ. Յուլիա Պոսկրիկինա

ՋՈՒՆԳԼԻՆԵՐԻ ԳԱԶԱՆՆԵՐԸ

Տվիգան սովածացել է
ջունգլիներում թափառելիս:
Նրա համար հյութեղ
տերևներով ծա՛ռ նկարիր:



Բուխուի ատամը ցավում է:
Նրան վիրակա՛պ նկարիր և
այտերին արցունքներ:

Տոտոն ուրախացել է իր գտածով:
Նկարի՛ր այն, ինչ գտել է կապիկը:

Բորենի Մբիզին վազում է խեղճ
Նիանիի հետևից:
Փրկի՛ր կապիկին և բորենուն
մտցրու՛ վանդակի մեջ:



Բոլոր գազանները
հավաքվել են ջրի մոտ:
Նկարի՛ր այն, ինչ նրանք
տեսել են լճի մակերեսին
և ինչից այդպես
զարմացել են:



Նկ. Յուրա Պրավդորինայա

Նկ. Կատերինա Ֆիլիպովա

ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐՈՇՈՒՄ

Վարվառա Նասոն

Հիսուս Քրիստոսի ծնունդից մոտ հազար տարի առաջ Իսրայելը կառավարում էր Սողոմոն թագավորը: Նրա իմաստության մասին գիտեին շատ երկրներում: Մարդիկ հեռվից գալիս էին, որպեսզի տեսնեին այդ հրաշալի կառավարչին: Սողոմոնը տարբերվում էր մեծ իմաստությամբ: Դեռ իր կառավարման սկզբում Տերը հայտնվել էր նրան գիշերը երազում և ասել. «Խնդրի՛ր, ի՞նչ տամ քեզ»: Սողոմոնն այդ ժամանակ իմաստություն էր խնդրել, և Տերը տվել էր այն նրան:

Մի անգամ Սողոմոն արքայի մոտ բերեցին երկու կին, որոնք վիճում էին նորածին մանկան համար: Նրանցից յուրաքանչյուրը պնդում էր, թե երեխան իրենն է: Այդ ժամանակ Սողոմոնը հրամայեց փոքրիկին երկու մասի կիսել: Ինչու՞ նա այդքան սարսափելի հրաման արձակեց: Իրական մայրն անմիջապես փոքրիկին զիջեց հակառակորդին՝ աղերսելով պահպանել փոքրիկի կյանքը: Իսկ խաբեբան ասում էր, որ ավելի լավ է փոքրիկին մասնատեն, որ նա ոչ մեկին բաժին չհասնի:

Սողոմոնը գիտեր, որ իսկական մայրը միշտ էլ կգթա իր երեխային: Դրա համար արքան հրամայեց. «Այս կնոջը տվե՛ք ողջ փոքրիկին, նա է նրա մայրը»: Եվ ծառաները փոքրիկին տվեցին նրա մորը, որն ուզում էր նրան պաշտպանել:

Մեր օրերում եթե ցանկանում են իմանալ, թե ովքեր են երեխայի ծնողները, արյան անալիզ են հանձնում: Դա թանկարժեք հետազոտություն է, որը շատ ժամանակ է խլում: Բայց Սողոմոնը հարցը լուծեց շատ հեշտ և արագ: Աստված նրան այդպիսի իմաստությամբ էր օժտել:

Այստեղից էլ առաջացել է «Սողոմոնի որոշում» արտահայտությունը, այսինքն՝ իմաստուն ելք դժվար իրավիճակից:

Թե ինչպես Սողոմոնն իմացավ՝ ով է փոքրիկի մայրը, դու կարող ես կարդալ Աստվածաշնչում՝ Թագավորների Երրորդ գրքի 3-րդ գլխում:

ՀԱՍԵՂ ԱՆԻՎՆԵՐ

Լրացրու՛ հարցերի պատասխանները հեծանիվի անիվներում և առաջին տառերով կկարդաս աստվածաշնչյան ամենահայտնի 2 կերակուրների անունները:



Մեծ անիվ

1. Ո՞վ էր Հիսուս Քրիստոսի մայրը: *(Ղուկ. 1.27)*
2. Ի՞նչ էր Մովսեսի եղբոր անունը: *(Ել. 7.1)*
3. Ո՞վ էր Աբրահամի եղբայրը, որ պապի անունն էր կրում: *(Ծննդ. 11. 24-27)*
4. Ո՞վ էր Հովսեփի կինը: *(Ծննդ. 41.45)*
5. Ի՞նչ են հավաքում մեղուները ծաղիկներից:
6. Ի՞նչ կենդանու վրա նստած Հիսուսը մտավ Երուսաղեմ: *(Մատթ. 21)*

Փոքր անիվ

1. Ինչպե՞ս են ասում կավագործին այլ կերպ:
2. Հակոբի որդիներից: *(Ծննդ. 30.13)*
3. Ո՞վ էր Աբրահամի եղբորորդին: *(Ծննդ. 12.5)*
4. Ո՞վ էր Կայենի եղբայրը: *(Ծննդ. 4.2)*
5. Ժամի 1/60 մասը:
6. Ինչպե՞ս է կոչվում ձիու և ավանակի խառնուրդը:

Կազմեց Թամարա Լամբրիանովան

Նկ. Դավիթ Հարությունյան

ՄԱԿԱՆՈՒՆԸ

Ելենա Միկուլա

Սահակն աշխարհի ամենավնասակար տղան է: Ավելի լավ է նրա ձեռքը չընկնել: Մեր բակի բոլոր երեխաներին նա մականուններ է մտածել: Իսկ երեկ նրան պատահեցի նաև ես: Նա քիչ էր մնում ինձ լացացներ: Ես նրան ոչ մի վատ բան չէի արել: Ես ընդհանրապես աշխատում եմ հեռու մնալ Սահակի նման երեխաներից: Մենք բակում խաղում էինք, և հանկարծ մայրիկս ինձ կանչեց պատշգամբից:

– Արմա՜ն

Իսկ Սահակն անմիջապես.

– Արմա՜ն, Արմա՜ն, գլուխդ դարմա՜ն:

Եվ բոլորը սկսեցին վրաս ծիծաղել ու կրկնել այդ հիմար ու տհաճ բառերը: Ես վիրավորվեցի, բայց, բայց ես, ափսոս, չէի կարողանում ոչ մի պատասխան մտածել: Ես տուն գնացի միայն մեկ մտքով. Սահակի մասին մի շատ ծիծաղելի ու վիրավորական ոտանավոր մտածել:

Ճաշից հետո ես վերցրեցի մի թուղթ, վրան գրեցի «Սահակ» և սկսեցի մտածել: Միակ բառը, որի հանգը բռնում էր այդ անվանը իմ գլխում «պահակ»-ն էր: Բայց դա այնքան էլ վիրավորական մականուն չէր: Ես մի քիչ մտածեցի, և ստացվեց. «Սահա՜կ, Սահա՜կ, անբան պահակ»: Մի փոքր ավելի լավ էր, բայց միևնույն է, շատ մեղմ էր ստացվել:

Այդ ժամանակ ես թղթին գրեցի «Սահակիկ»: Երևի մի ժամ գլուխ կոտրեցի, ու վերջապես ստացվեց. «Սահակիկ, Սահակիկ, թթված խաղողի հատիկ»: Ավելի մեղմ ստացվեց: Ես այդ թուղթը դիմացս նստեցի ևս մեկ ժամ, բայց կարողացա մտածել միայն. «Սահակ, Սահակ, ոստիկանի մահակ»: Բայց դա բոլորովին էլ այն չէր, ինչ ես էի ուզում:

Ես գնացի եղբորս՝ Արսենի մոտ, որը դաս էր սովորում, և խնդրեցի նրան.

– Օգնի՛ր Սահակի համար ծաղրական բան մտածել:

Բայց նա ինձ դուրս արեց ու ասաց, որ երկրաչափությունն է սովորում և ժամանակ չունի: Ես անցա սենյակս, նորից նստեցի սեղանի մոտ, բայց ինձ մոտ ոչինչ չստացվեց: Որոշ ժամանակ անց եկավ Արսենն ու ասաց.

– Ահա, թե ինչ կարողացա մտածել. «Սահակիկ, Սահակիկ, մայրիկի խելոք բալիկ»:

Բայց դա էլ վիրավորական չէր ու հանգն էլ չէր համապատասխանում: Ես բոլորովին չէի ուզում դուրս գալ, բայց պետք էր շանը զբոսանքի տանել: Ես վերցրեցի գնդակը և Չալոյի հետ դուրս եկանք բակ:

Սահակը նստարանին նստած էր: Երբ ինձ տեսավ, քմծիծաղ տվեց: Ես լարված սկսեցի վերհիշել բոլոր ծաղրական տողերը, որ մտածել էինք Արսենի հետ. «Հիմա ես նրան կասե՜մ, ես ամեն ինչ կասե՜մ...» Ու հանկարծ հասկացա, որ նման բան անելու ոչ մի իմաստ չկա: Դա պարզապես հիմարություն է:

Եվ ես նրան շշմեցրի.

– Սահա՛կ, արի գնդակ խաղանք:

Տղան խիստ զարմացավ: Նա ամեն ինչ կսպասեր, միայն ոչ դա: Նա ինձ պատասխանեց դանդաղ և ամեն բառն ընտրելով.

– Լավ, գնանք, Արմա՛ն:

Եվ գիտե՞ք, Սահակն այլևս երբեք չհիշեց այդ հիմար ծաղրանքը:

Նկ. Մարիսյա Ռոստակա

ԱՊԱԿԵ ԱԶՔԵՐԸ

Անդի Ֆետ

4 «Ա» դասարանում շատ զայրացնող բան է տեղի ունեցել. աշակերտներից մեկը հանցանք է գործել: Ոստիկանը պետք է պարզի, թե ինչ է կատարվել: Կօգնե՞ս բացահայտել գործը:

Մաքս Դիկին նորից անկարգություն է արել: Եվ այս անգամ՝ բավականին լուրջ: Առավոտյան նա խանգարել է ուսուցչին՝ վարել կրոնագիտության դասը: Տիկին Լուտցերը վերջապես կորցրել է համբերությունը: Նա արդեն պատրաստվում էր դասարանի համար կարդալ դասագրքի 76 էջի նյութը: Այդ հատվածում խոսքը հավատի, սիրո և հույսի մասին էր: Բայց Մաքսը նույնիսկ դասագիրքը չբացեց: Դրա փոխարեն նա Լաուրայի անգույն շրթներկը փոխարինեց մատիտի սոսնձով:

– Ո՞վ է ցանկանում կարդալ դեղինով ընդգծված տեքստը:

– Ե՜ս, ե՜ս, ե՜ս, – բացականչեց Լինուսը՝ ձեռք բարձրացնելով, – ես նույնիսկ անգիր գիտեմ այս համարը. «Եվ հիմա մնում է հավատ, հույս, սեր՝ այս երեքը, և սրանցից մեծագույնը սերն է» (Կորընթացիների առաջին թուղթ, գլուխ 13, համար 13):

– Կեցցե՛ս, Լինու՛ս: Ամեն ինչ ճիշտ է: Եվ այսպես, ի՞նչն է մնում: Հավատը, սերը, բայց այս Մաքս Դիկիի հետ ես կորցնում եմ բոլոր հույսերը:

Դասարանն ուրախ ծիծաղեց:

– Մա՛քս, ո՞րն է այս երեքից ամենագլխավորը:

– Սե՜րը, տիկի՛ն Լուտցե՛ր, – տեղից բացականչեց Լինուսը:

– Ապրե՛ս, Լինու՛ս, – պատասխանեց ուսուցչուհին, – դասին աշխատելու համար դու հինգ ես ստանում:

Այդ պահին Լաուրան ճչաց.

– Ի՜նչ զզվելի է: Շրթունքներիս սոսինձ քսվեց:

Մաքսն այնպես ծիծաղեց, որ քիչ մնաց աթոռից ընկներ:

– Մա՛քս, – զայրացավ ուսուցչուհին, – արի՛ գրատախտակի մոտ: Կարծում ես՝ չեմ տեսնո՞ւմ, թե դու այնտեղ ինչով ես զբաղված:

Զանգից հետո բոլորը վազեցին միջանցք: Բայց այնտեղ էլ առանց պատահարների չանցավ: Տիկին Լուտցերը տեսավ, թե Մաքսն ինչպես բռնեց մի ձեռքով Լինուսի վիզը, մյուսով՝ մազերը:

Լինուսը ճչաց: Նա փորձում էր ազատվել, և լարվածությունից նրա դեմքն անմիջապես կարմրեց: Տղան հազիվ էր կարողանում շնչել: Տիկին Լուտցերը վազեց կռվարարների մոտ, բռնեց Մաքսի թևից և նրան մի կողմ քաշեց.

– Այս ի՜նչ բան է: Մտածու՞մ ես՝ ինչ ես անում:

Մաքսը թողեց Լինուսին, և նա, վիզը բռնելով, շունչը տեղը բերեց, հետո նեղացած սկսեց լաց լինել.

– Այս աննորմալը խեղդում էր ինձ: Եվ դա այն պատճառով, որ ես իրեն չեմ տվել իմ ապակե գնդիկները...

Ապակե գնդիկներով խաղն այն ժամանակ իսկական թրենդ էր: Տղաները փորձում էին որքան հնարավոր է շատ քարեր հավաքել, իսկ աղջիկները՝ դրանցից ամենագեղեցիկները: Դասամիջոցներին բոլորը հավաքվում էին ավազի շուրջը: Լինուսը լավագույն խաղացողներից էր: Նա մեկ մետր հեռավորությունից խփում էր նշանակետին:

Ապակե գնդիկներին դպրոցում վերաբերվում էին որպես թանկարժեք քարերի: Դրանցից կային գրեթե բոլոր երեխաների գրպաններում: Ամենամեծ հավաքածուն Լինուսինն էր՝ ավելի քան 100 հատ: Քաղաքի խանութներում արդեն հնարավոր չէր գտնել ոչ մի գնդիկ: Ինչպիսի՜ ապակե գնդիկներ ասես, որ չունեին երեխաները. մեծ ու փոքր, անփայլ ու թափանցիկ, արծաթազօծ ու ոսկեզօծ, երկնագույն ու կանաչ: Բայց ամենաթանկն էին համարվում լիովին սև գնդիկները: Երեխաները դրանք անվանում էին «քիլլեր»: Մեկ այդպիսի գնդիկը կարելի էր փոխանակել քսան սովորականի հետ:

Վիրավորանքից լաց լինելով՝ Լինուսը կանգնած էր ուսուցչուհու առաջ: Տիկին Լուտցերն իրեն կորցրել էր.

– Մա՛քս, բավական է: Դու այսօր դասերից հետո կմնաս: Ես կզանգահարեմ քո և Լինուսի ծնողներին: Դասերից հետո՝ ուսուցչանոց: Հասկանալի՞ է:

Մաքսն անտարբեր ցնցեց ուսերը: Թվում էր՝ դա նրան բոլորովին չէր հուզում:

12:15 հնչեց զանգը, և դպրոցականների խումբն աստիճաններով վազեց բակ: Բոլորը ջանում էին հնարավորինս արագ լքել դպրոցը: Միայն մի տղա էր դատապարտված կանգնել միջանցքում՝ Մաքսը: Նա պետք է մնար դասերից հետո, իսկ քանի որ այդ ժամանակ բոլոր դասասենյակներում մաքրություն էր ընթանում, տղան սպասում էր ուսուցչանոցի դիմաց: Տիկին Լուտցերը դեռ չէր եկել:

Հանկարծ Մաքսը տեսավ Լինուսի մայրիկին: Նա գումար էր վաստակում դպրոցում՝ դասարանները մաքրելով: Մինչ մայրիկն աշխատում էր, Լինուսը սովորաբար նրան սպասում էր դպրոցում և այդ ընթացքում կատարում էր տնային հանձնարարությունները:

«Վա՜յ, չէ, – մտածեց Մաքսը, – եթե նրան արդեն զանգել են, ապա հիմա նա ինձ ցույց կտա»:

Նա շրջվեց և քաշեց ուսուցչանոցի դուռը: Ու՜ֆ, բաց է: Մաքսը հասցրեց թաքնվել սենյակում, մինչ դույլը ձեռքին կինը կտեսներ նրան:

Տղան շուրջը նայեց: Ուսուցչանոցը դպրոցի սրբության սրբոցն էր: Այն ասես գանձերով լի սնդուկ լիներ: Այնտեղից լինոլեումի, սպիրտի և քաթանե քարտեզների հոտ էր գալիս: Այդ սենյակ մտնելու իրավունք ունեին միայն խելոք աշակերտները, որպեսզի ինչ-որ իրեր տային կամ վերցնեին

ուսուցիչներից: Մաքսը դեռ երբեք ուսուցչանոցում չէր եղել:

Բերանը բաց նա զննում էր մեծ գլոբուսը, եղջերուի կոտոշները, թիթեռների հավաքածուն և իսկական մարդկային կմախքը: Մաքսը հիացած էր: Նա ասես այլ աշխարհում հայտնված լիներ: Նա պատկերացրեց, թե ինքը բնագետ է և ուղևորվել է սաֆարի:

Ամենից շատ Մաքսին հետաքրքրեցին կենդանիների խրտվիլակները: Դրանք երեսունից ավելի էին, և բոլորն էլ իրականի տեսք ունեին. նապաստակ, ճագար, եղնիկի գլուխներ և նույնիսկ վարազ: Այնտեղ այն ամենն էր, ինչ դպրոցը հավաքել էր տասնյակ տարիների ընթացքում:

Շունչը պահած՝ Մաքսը քայլում էր խրտվիլակների շարքերի երկայնքով: Նա անզոր էր հայացքը հեռացնելու դրանցից. անտառաքլոր, փասիան, նրանցից հետո՝ սկյուռիկ, կզաքիս և կնգում: Թվում էր, թե դրանք կենդանի էին, Մաքսը նույնիսկ ուզում էր շոյել նրանց: Հենց այն պահին, երբ նա քիչ էր մնում ձեռքը մեկներ, սենյակ մտավ տիկին Լուտցերը :

– Ահա, Մա՛քս: Դու պետք է կոկիկ արտագրես իմ ընդգծած տեքստը: Ես քիչ հետո կգամ քո հետևից:

Տղան սթափվեց իր երազներից: Նա քաշեց ձեռքն ու վախեցած նայեց ուսուցչուհուն:

– Տեսնենք, այս հանձնարարությունը կսանձի՞ մեր Դիկիին:

Ուսուցչուհին աղմուկով սեղանին դրեց «Դպրոցական կանոնակարգ» հաստափոր գիրքը, որի վրա հիմա պիտի աշխատեր Մաքսը:

– Եթե ես թեկուզ մեկ սխալ տեսնեմ, ամբողջը սկզբից ես սկսելու գրել: Պա՞րզ է:

Տիկին Լուտցերը դուրս եկավ՝ իր հետևից փակելով դուռը: Մաքսն ուսուցչանոցում մնաց մենակ:

Խոր հոգոց հանելով՝ նա բացեց տետրն ու սկսեց արտագրել դպրոցական կանոնները: Տասնհինգ րոպե անց, որը Մաքսին մի ամբողջ ժամ թվաց, տիկին Լուտցերը վերադարձավ սենյակ: Նա ուզում էր հետևել, թե ինչով էր զբաղված իր աշակերտը:

– Գրու՞մ ես:

Մի փոքր անց Մաքսը ձանձրացած բարձրացրեց գլուխը: Հակառակի պես պատուհանից դուրս հրաշալի եղանակ էր: Արևի շողը, որ անդրադառնում էր ապակե դարակի վրա, շլացրեց տղային: Մաքսին թվա՞ց, թե՞ եղջերուի գլուխն իրոք իրեն աչքով արեց: Տիկին Լուտցերն արդեն վաղուց սենյակ չէր մտել, դրա համար Մաքսը համարձակվեց տեղից վեր կենալ և մոտենալ խրտվիլակին: Այո, արևն անդրադառնում էր եղջերուի սև ապակե աչքերում:

Ժամը մեկին Մաքսը վերջապես ավարտեց տեքստն արտագրելը, և նրան բաց թողեցին: Այսօր նրա հետևից ոչ ոք չէր եկել: Ստիպված էր մենակ տուն գնալ: Ծնողները աշխատանքից գալու են ընթրիքին: Ճանապարհին նա փուռ վազեց և իր համար բուլկի և սառնաշաքար գնեց: Ահա և այսօրվա ողջ ճաշը:

Դուրս գալուն պես Մաքսը տեսավ Լինուսին ու նրա մայրիկին:

– Օ՜յ, չէ, – վախեցավ տղան:

Շրջվելով՝ նա կրկին մտավ փուռ: Մի փոքր կանգնելով՝ իր համար ևս մեկ սառնաշաքար գնեց: «Հուսամ, նրանք այստեղ չեն մտնի, – մտածեց Մաքսը, – ֆու՜... կողքով անցան, քիչ մնաց՝ բռնվեի»: Տղան ուրախ էր, որ իրեն ոչ ոք չնկատեց:

Հաջորդ օրն առավոտյան 4 «Ա» դասարանում առաջին դասը կենսաբանությունն էր, որը դասավանդում էր տիկին Կաբոտը: Դասի թեման էր. մեր երկրի գիշատիչ կենդանիները:

– Ձեզանից որևէ մեկը գիտի՞, թե ինչ գիշատիչներ են հանդիպում մեր շրջանում, – հարցրեց ուսուցչուհին:

– Իհարկե, գիտենք. Մաքս Դիկին, – բացականչեց Թիմը՝ դասարանի ավագը:

Բոլորը ծիծաղեցին: Իսկ Մաքսը գրպաններում սեղմեց բռունցքները:

– Վե՜րջ, լռությու՛ն, – դասարանին հանգստացրեց ուսուցչուհին, – այսօր մենք կծանոթանանք աղվեսներին և լուսանին: Մեր դպրոցում կան այդ կենդանիների խրտվիլակները: Մեկ րոպե սպասե՛ք, ես հիմա կբերեմ: Լինու՛ս, կօգնե՞ս ինձ:

Խելոք աշակերտին միշտ կարելի է ուսուցչանոց մտնել: Մաքսը զայրացավ. նորից այդ Լինուսը՝ ուսուցիչների սիրելին, հնազանդ տղան:

Անցավ հինգ, ապա տաս րոպե: Բայց տիկին Կաբոտը չէր վերադառնում: Հետո դասարան մտավ Լինուսը և լուռ նստեց իր տեղը: Նա կենդանիների խրտվիլակները չէր բերել:

– Ի՞նչ է պատահել: Վախեցար, որ քեզ կկծե՞ն, – ծաղրանքով հարցրեց Լաուրան:

Բայց մինչ Լինուսը կհասցներ պատասխանել, լսվեց շչակների ձայնը. ոստիկանական մեքենան մտնում էր բակ:

– Ի՜նչ սարսափելի է: Սա արդեն մանկական անկարգություն չէ, այլ իսկական հանցագործություն, – վրդովված դասարան մտավ տիկին Կաբոտը:

Նրա հետևից մտավ տիկին Լուտցերը: Երկու ուսուցչուհիներն էլ հուզված էին:

– Ինչ-որ մեկը մտել է ուսուցչանոց և արել սա:

Տիկին Կաբոտն աղվեսի խրտվիլակը բարձրացրեց այնպես, որ ողջ դասարանը կարողանար տեսնել: Աղվեսի աչքերը չկային:

– Մեր գրեթե բոլոր կենդանիների աչքերը հանել են: Ինչ-որ մեկը գողացել է դրանք: Ոստիկանները քննություն սկսեցին:

Մի քանի րոպե անց Լինուսն ասաց.

– Տիկի՛ն Կաբոտ, ես գիտեմ, թե ով կարող էր դա անել...

Ուսուցչուհին և հենց նոր դասարան մտած

ոստիկանը զարմացած նայեցին տղային: Լինուսը զգաստ կանգնեց ու ասաց.

– Կարծես թե երեկ ինչ-որ մեկը դասերից հետո մնացել էր ուսուցչանոցում, – ակնարկեց նա:

– Մաքս Դիկին, – խմբով գոռաց ողջ դասարանը:

Ոստիկանը հարցրեց Լինուսին.

– Ո՞վ է Մաքսը:

– Ահա նա, – պատասխանեց Լինուսն ու մատնացույց արեց դասարանցուն:

– Մա՛քս, արի ինձ հետ: Մենք քեզ մի քանի հարց ունենք, – ասաց ոստիկանը տղային:

Մինչ Մաքսը քայլում էր դեպի դուռը, դասարանցիները նրան նայում էին, ասես իսկական հանցագործի: Կասկածյալն ակամա հայացքը իջեցրեց: Նրա այտերով արցունքներ էին հոսում:

Մինչ նա դուրս կգար դասարանից, տիկին Լուտցերը, դիմելով ոստիկանին, հաստատեց, որ Մաքս Դիկին իրոք դասերից հետո որոշ ժամանակ ուսուցչանոցում մենակ է եղել:

– Ընդ որում, դրանից ոչ շատ առաջ, – ավելացրեց նա, – Մաքսն ուզում էր դասարանցիներից մեկից խլել գնդիկները: Գուցե, նա դրա համար է գողացել խրտվիլակների ապակե աչքերը: Ի՜նչ սարսափելի է:

Երբ ոստիկանն ու Մաքսը դուրս եկան, Լինուսը կրկին ոտքի կանգնեց:

– Տիկի՛ն Լուտցեր, – ասաց նա, – նայե՛ք Մաքսի կերակրատուփը, տեսե՛ք, թե ինչ կա այնտեղ:

Ուսուցչուհին տարակուսանքով նայեց Լինուսին, բայց, այնուամենայնիվ, մոտեցավ Մաքսի պայուսակին, հանեց կերակրատուփը և բացեց այն: Այնտեղ բուլկու կողքին հինգ սև ապակե աչք կար: Դրանք ձեռքն առնելով՝ տիկին Լուտցերը շտապեց ոստիկանների մոտ:

– Ես գիտեմ, թե ով է գողացել ապակե աչքերը, – տեղեկացրեց նա՝ մոտենալով ոստիկաններին:

Այ այսպիսի դետեկտիվ պատմություն: Իսկ դու կռահեցի՞ր, թե ով էր հանցագործը: Պատասխանն այնքան էլ ակնհայտ չէ: Ինչ-որ մեկը դպրոցում էր մնացել նաև Մաքսից հետո...

Ճիշտ է, դա Լինուսն էր: Փոքրիկ դանակի օգնությամբ նա հանել էր խրտվիլակների աչքերը, մինչ իր մայրիկը մաքրում էր դասարանները: Կասկածն իրենից ցրելու համար Լինուսը մի քանի գնդիկ գցել էր Մաքսի կերակրատուփի մեջ: Սակայն նա ինքն իրեն մատնեց, երբ ուսուցչուհուն առաջարկեց նայել տուփը: Նա որտեղի՞ց կարող էր իմանալ, որ Մաքսը գնդիկները հենց այնտեղ է թաքցրել: Այդ պատճառով էլ տիկին Լուտցերն անմիջապես հասկացավ, թե ով է մեղավորը:

Նկ. Մարիամ Միկիտյան

Նկ. Եվենա Գավրիշուկ

Լուիզա Էզաու

ԿԱԿԱՈՒ

Այն մասին, թե ինչպես մի ֆուտբոլիստ հանդիպեց Աստծուն:

Աղքատությունը Սան Պաուլոյում

Կակաուն ծնվել է 1981 թ. մարտի 27-ին Բրազիլիայի Սանտու Անդրե քաղաքում: Ծնողները որդուն անվանել են Կլաուդեմիր Ջերոնիմո Բարետո: Երբ նա դեռ շատ փոքր էր, ինչ-որ մեկը տղային հարցրել է, թե ինչ է նրա անունը: «Կակաուդեմիր» – պատասխանել է նա: Այդպես ծագել է այն կեղծանունը, որով հետո ինքն է սկսել իրեն անվանել: «Կակաու» անունը գրված է եղել նույնիսկ նրա ֆուտբոլային մարզաշապիկի վրա, թեև սովորաբար դրա վրա գրում են խաղացողների ազգանունները:

Կակաուի ընտանիքը աղքատ էր: Մայրը հավաքարար էր աշխատում և երեք որդիներին մենակ էր դաստիարակում: Դրա համար տղաները պետք է փոքրուց նրան օգնեին գումար վաստակել: Եղբայրները հաճախ քաղցած էին մնում և շեղվելու համար ֆուտբոլ էին խաղում Սան Պաուլոյի փողոցներում: Այդպես արդեն ութ տարեկանում Կակաուն որոշել էր պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալ:

Եղբայրները երազում էին այնքան գումար աշխատել, որ այլևս ոչ մի բանի կարիք չունենային: Դրա համար նրանք խաղում էին քաղաքի բոլոր ֆուտբոլային ակումբներում: Տասներեք տարեկանում Կակաուն հասավ առաջին հաջողությանը. «Պալմեյրաս» ակումբը նրա հետ պայմանագիր կնքեց: Հաջորդ երեք տարիները լեցուն էին բարդ ուսմամբ, անդադար մարզումներով և զրկանքներով: Այնուհետ ակումբն անսպասելիորեն հեռացրեց Կակաուին, և պատանին նորից դեմ առ դեմ կանգնեց աղքատությանը:

Հարստությունը Քրիստոսում

Ողջ Բրազիլիայում, այդ թվում նաև Կակաուի ընտանիքում, Աստծո հանդեպ հավատը մեծ դեր ուներ: Սակայն պատանին երկար ժամանակ Հիսուսին չէր ճանաչում որպես իր Փրկիչ: Մի անգամ Կակաուն ծանոթացավ մի երիտասարդի հետ, որը ճանաչում և սիրում էր Հիսուսին: Այդ պահից Կակաուն սկսեց ավելի խորությամբ մտածել իր հավատի մասին: Նրա եղբայրը տեղափոխվել էր այլ քաղաք և որոշ ժամանակ անց ապաշխարել էր եկեղեցում: Երբ նրանք հանդիպեցին, Կակաուն նկատեց, որ եղբայրը շատ է փոխվել: Նա զարմանալի պատմություններ էր պատմում Քրիստոսի մասին: Այդ ամենն այնքան հետաքրքրեց Կակաուին, որ նա նույնպես սկսեց խորհել հոգևոր հարցերի շուրջ և Աստվածաշունչ կարդալ: Նախկինում պատանին մտածում էր, թե ինքը միևնույն է Աստծո համար: Սակայն հետո հասկացավ, որ ճիշտ չէր. Հիսուսը մահացել էր իր մեղքերի համար և հարություն առել, Նա հոգում էր իր մասին ամեն օր: Այդ ճշմարտության գիտակցումը Կակաուին բերեց իսկական քրիստոնյա դառնալու որոշման:

Չիրականացած երազանքները պատանուն ցույց տվեցին, որ նախկինում ինքը չէր վստահում Աստծուն, այլ իր հույսը դնում էր ֆուտբոլի վրա: Սակայն ամեն բան փոխվեց: Կակաուն աշխատում էր փողոցային վաճառող, շարունակում էր սովորել դպրոցում և փողոցում ֆուտբոլ խաղալ: Պրոֆեսիոնալ սպորտի մասին երազանքները գրեթե մոռացվել էին:

Նոր կյանքը Գերմանիայում

Եվ ահա, տեղի ունեցավ մի իրադարձություն, որին Կակաուն բոլորովին չէր սպասում: Իր նախկին մարզիչի միջոցով նա ծանոթացավ Գերմանիայում բնակվող Օսմար դե Օլիվյերի հետ: Օսմարը տասնութամյա Կակաուին հրավիրեց իր տուն և ընդունեց նրան, ինչպես հարազատ որդուն: Արդեն մեկ տարի անց Կակաուն խաղում էր Մյունխենի «Տյուրկգյուջյու» ֆուտբոլային ակումբում: Կակաուն տեսավ, որ Աստված իր կյանքի համար ծրագիր ունի, և, չնայած բոլոր դժվարություններին, իրեն տանում է դեպի ինչ-որ նպատակ:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալու պատանու վաղեմի երազանքը իրականացավ, երբ նա հայտնվեց «Նյուրնբերգ» ակումբի առաջին (հիմնական) կազմում: Կակաուն այնքան լավ էր խաղում, որ շուտով մյուս ակումբները ևս նկատեցին նրան:

Շուտով Կակաուն դարձավ համաշխարհային ճանաչում ունեցող ֆուտբոլիստ. նա հանդես էր գալիս Գերմանիայի ֆուտբոլի առաջնությունում, Եվրոպայի Լիգայում և Չեմպիոնների Լիգայում: Իսկ 2010 թ. Գերմանիայի հավաքականի կազմում հաջողությամբ հանդես եկավ ֆուտբոլի աշխարհի առաջնությանը:

Մեծ սերը

2002 թ. Կակաուն ամուսնացավ Թամարա անունով մի աղջկա հետ: Նրանք ունեցան 3 երեխա: Հիսուսի հանդեպ հավատն ու Նրա հետ մտերմիկ հարաբերությունները նրանց ընտանեկան կյանքի հիմքն են: Բարետոների ընտանիքը ակտիվ մասնակցություն ունի եկեղեցու կյանքում: Կակաուն հանդես է գալիս իր կյանքի և հավատի մասին վկայություններով, ինչպես նաև աշխատում է «World Vision» քրիստոնեական բարեգործական կազմակերպությունում, որն օգնություն է ցուցաբերում երեխաներին: Նա ամեն օր Աստվածաշունչ է կարդում և ասում է, որ հավատքն իր համար կյանքում ամենակարևորն է:

Այսօր Կակաուն արդեն ֆուտբոլ չի խաղում, բայց նա օգնում է արտասահմանցի սպորտսմեններին Գերմանական ֆուտբոլային միությունում ընտելանալ Գերմանիայում: Այդպես Կակաուի նվիրական երազանքը կատարվեց, և այն իրագործեց Հիսուսը:

ԱՆՏԱՌԻ ՀՍԿԱՆ

Յուլիա Աբդուվախիդովա

Իսկ դու գիտե՞ս, թե ինչպես է կոչվում աշխարհի ամենաբարձր ծառը: Այդ փառահեղ հսկան հազարամյակներ շարունակ աճում է դեպի վեր և իրավամբ կոչվում է հսկա *սեքվոյա* (Sequoiadendron giganteum) կամ *մամոնտածառ:* Ծառն այդպիսի անուն է ստացել հսկայական չափերի և այն պատճառով, որ դրա կախված ճյուղերն արտաքուստ նման են մամոնտի ժանիքների:

Իսկ դու գիտե՞ս, որ այդ ծառի միջին բարձրությունը մոտ 60 մետր է, բայց հանդիպում են նաև ամբողջական անտառներ՝ 90 մետրից ավել բարձրությամբ ծառերով: Այսօր հայտնի են սեքվոյաներ, որոնք 105 մետրից ավելի են: Մոտավորապես երեսունհարկանի շենքի բարձրության, պատկերացնո՞ւմ ես:

Իսկ դու գիտե՞ս, որ սեքվոյան մշտադալար փշատերև ծառ է, որն աճում է Հյուսիսային Ամերիկայում: Այն երբեք չի հրաժարվում իր փշերից: Այս ծառի կեղևը շատ հաստ է, մոտ՝ 20-30 սմ.: Հասուն ծառի տրամագիծը հասնում է 10-12 մետրի: Այդպիսի հսկայի քաշը գերազանցում է 2000 տոննան: Եվ այս ծառերը կարող են ապրել ավելի քան 3000 տարի, ինչը նրանց դարձնում է երկրի ամենահնագույն բույսը: Սեքվոյայի տեսքն ակամա հիացմունք է առաջացնում...

Իսկ դու գիտե՞ս, որ այս զարմանալի ծառի արմատներն իր համեմատ այնքան էլ մեծ չեն, հաճախ՝ ընդամենը 2 մետր խորությամբ: Ուրեմն ի՞նչն է այդ հսկա ծառին օգնում, որ դիմակայի քամու ուժին և տարերքների այլ փորձություններին: Ուրեմն ի՞նչն է նրա ուժի, բարձրության, երկարակեցության և բարգավաճման գաղտնիքը՝ չնայած արմատի ցածր ներուժի: Սեքվոյաներն աճում են ոչ թե մեկ առ մեկ, այլ ամբողջական անտառներով, որտեղ նրանց արմատները միահյուսվում ու սերտաճում են միմյանց: Դա նրանց հսկայական ուժ ու ցանկացած վատ եղանակի դիմագրավելու հնարավորություն է տալիս: Այդ պատճառով սեքվոյաները կարող են դիմանալ ուժեղ քամիների և նույնիսկ հեղեղումների:

Իսկ դու գիտե՞ս, որ մոլորակի ամենաբարձր ծառը սեքվոյա Հիպերիոնն է, որն աճում է Ռեդվուդ ազգային պարկում՝ Սան Ֆրանցիսկոյից ոչ հեռու: Այդ հսկայի բարձրությունը 115.6 մետր է: Եվ այդ ծառը կարող էր ավելի շատ աճել, եթե չլիներ դրա վերևում փայտփորիկի փորած փչակը: Հիպերիոնի բնի տրամագիծը շարունակում է աճել տարեկան մոտ 1.5 սմ-ով: Միայն պատկերացրու՛, որ այդ ծառի փայտանյութը կբավականացներ մի հսկա տուն կառուցելու համար: Սեքվոյան այնքան մեծ է, որ հարկ եղավ 126 լուսանկար նկարել, որպեսզի հնարավոր լիներ կադրերում պատկերել նրա ողջ բունը և ճյուղերը:

Իսկ դու գիտե՞ս, որ մարդիկ այդ ծառից սովորելու բան ունեն: Պետք չէ երբեք բավարարվել ձեռքբերումներով, անհրաժեշտ է նոր նպատակներ դնել մեր առջև և շարունակել աճել: Որքան շատ քո մեջ լավ հատկանիշներ զարգացնես, այնքան պիտանի կլինես Աստծուն: Նաև հարկավոր է հիշել, որ նույնիսկ ամենափոքր մեղքը խոչընդոտ է դառնալու հոգևոր աճին ու հեռացնելու է Աստծուց: Քրիստոնյաների համար ևս դժվար է միայնակ դիմագրավել բոլոր փոթորիկներին և փորձություններին: Դրա համար էլ այդքան կարևոր է միասին լինելը:

ՍՈԽՈՎ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քեզ հարկավոր է.

1. Սոխ
2. Հողով ծաղկաման
3. A4 սպիտակ թուղթ
4. Մկրատ
5. Ֆլոմաստեր
6. Քանոն
7. Սոսինձ կամ սոսնձող բարձիկներ

Փորձ

1. Վերցրու՛ A4 սպիտակ թուղթն ու այն երկարությամբ բաժանի՛ր երկու հավասար մասի:

2. Երկու մասերն այնպես սոսնձի՛ր, որ ստացվի մեկ երկար շերտ:

3. Չափի՛ր ու նշի՛ր շերտի վրա ամեն 5 սմ-ը:

4. Սոխը դի՛ր հողով ծաղկամանի մեջ (դրանից առաջ սոխը մի քանի օր դի՛ր ջրով բաժակի մեջ): Դնելուց առաջ կտրի՛ր սոխի վերևի մասը:

5. Ծաղկամանը դի՛ր պատուհանի մոտ, տաք տեղում, իսկ հետևում պատին սոսնձի՛ր թղթե քանոնը:

6. Հետևի՛ր սոխի աճին ամեն օր և նշի՛ր, թե քանի սանտիմետրով կաճի նրա կանաչ ծայրը մեկ օրում, շաբաթում և ամսում:

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ ընդունելուց հետո շատ կարևոր է նաև շարունակել աճել հավատքի մեջ: Կան «Հոգևոր աճի 5 աղբյուրներ», որոնք քեզ կօգնեն հոգևոր աճման ճանապարհին:

Նկ. Դավիթ Հարությունյան

Վիկտոր Մ., 12տ., Ուկրաինա

Հովհաննես Հարությունյան 9տ., ք. Երևան

Նատալի Հովհաննիսյան
5տ., ք. Երևան

Աննա Ֆեդունեց, 7տ., ԱՄՆ

Օլգա Բարիշնիկովա, Ռուսաստան

Օլգա Անտիպովա,
14տ., Ռուսաստան

Դավիթ Օհանյան 12տ., ք. Երևան

Արահետ 3/21 (21)

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» Բարեգործական հասարակական կազմակերպություն:
Մանկական քրիստոնեական ամսագիր:
Լույս է տեսնում տարեկան 6 անգամ:

Ռուսերեն ամսագիրը հրատարակվում է 1990թ. - ից:
Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, ղրղզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն: 2018թ. - ից՝ նաև հայերեն:

Տպագրվում է կամավոր նվիրատվությունների միջոցով, բաժանվում է անվճար:

Գլխավոր խմբագիր՝ Վալդեմար Ցորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Թամարա Լամբրիանովա
Արփինե Մինասյան

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել
և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ»
ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

էջ 7.Լուսանկարը՝ ©Alyssa Ledesma/unsplash.com
էջ 8-11. © Paul White Productions
ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան
էջ 16-17.«Почему не летают лягушки?» ©«Свет на Востоке» 1999
էջ 18-22 «FeseLutter».©CLV Christliche Literatur- Verbreitung , Bielefeld,
էջ 26-27.Լուսանկարը՝© My Good Images/shutterstock.com

Ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Դավիթ Հարությունյանի

Կազմի լուսանկարը՝ *© New Africa/shutterstock.com*

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

Աստվածաշնչյան մեջբերումները վերցված են «ԱՐԱՐԱՏ» և «TBS» թարգմանություններից:

© «Լույս Արևելքում», 2021թ.

www.lio.ru/tropinka

Դասախաններ

էջ 2. Հոգևոր աճ:

էջ 6. Օրենքի այս գիրքը թող քո բերանից չհեռանա՛, գիշեր ու ցերեկ մտածի՛ր դրա մասին, որպեսզի նրա մեջ ամբողջ գրվածը պահես ու կատարես. քանի որ միայն այդ դեպքում գործերդ կբարգավաճեն, և հաջողություն կգտնես (Հեսու 1.8):

էջ 15. ***Մեծ անիվ*** - *ՄԱՆԱՆԱ*, ***Փոքր անիվ*** - *ԲԱՂԱՐՋ:*

էջ 23. 1. Օդապարիկ, 2. Կետ, 3. Ծաղիկներ, 4. Կարուսել, 5. Սուզանավ:

էջ 29. **1.** Աղոթել, **2.** Աստվածաշունչ կարդալ, **3.** Եկեղեցի հաճախել **4.** Պատմել Հիսուսի մասին, **5.** Հաղորդակցվել:

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Աստված քեզ այսօր նոր օր է նվիրում,
Ուրա՛խ եղիր ու գոհ վաղ առավոտից
Եվ հիշի՛ր, որ Տիրոջ մեծ սիրո մեջ է
Աղբյուրը կյանքի, լույսի, բարության:

ԱՆԿԻ՛Ր ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ ՈՒՐԱԽ ԳԵՍՔԵՐՈՎ

Նկ. Ալեքսանդր Միկուսևիչ

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ